Australian Government

COVID-19 VACCINATION

COVID-19-ի երկարաժամկետ հետևանքները

27 հունիսի, 2022

Մարդկանցից շատերը, ովքեր վարակվում են COVID-19-ով, կարճ ժամանակով ախտանիշներ կունենան, իսկ հետո մի քանի շաբաթվա ընթացքում կառողջանան: Յուրաքանչյուր անձի համար տարբեր է COVID-19-ից առողջանալու տևողությունը: Սա կախված է նրանից, թե որքան հիվանդ եք եղել COVID-19-ով: Այն կարող է նաև կախված լինել այն բանից, թե արդյոք դուք ունեք որևէ այլ առողջական խնդիրներ:

Կան մարդիկ, ովքեր երկարաժամկետ առողջական խնդիրներ են ունենում COVID-19-ից հետո: Երբեմն COVID-19-ը պատճառ է դառնում, որ մարդն իրեն վատ զգա շատ ամիսների ընթացքում՝ սկզբնական հիվանդությունից հետո: Սա կոչվում է «երկարատև COVID»: Երկարատև COVID-ը կարող է տևել շատ շաբաթներ և ամիսներ, նույնիսկ այն բանից հետո, երբ մարդն այլևս չունի վիրուսը:

Երկարատև COVID-ն ավելի հավանական է այն մարդկանց մոտ, ովքեր ունեցել են ծանր

COVID-19: Սակայն նույնիսկ այն մարդիկ, ովքեր ունեցել են COVID-19-ի թեթև վարակ և կարիք չեն ունեցել հոսպիտալացվելու, դեռ հնարավոր է, որ երկարատև COVID զարգանալ:

Երկարատև COVID-ի ախտանիշները

Երկարատև COVID-19-ը կարող է առաջացնել ախտանիշների լայն շրջանակ և կարող է նույն կերպ չազդել բոլորի վրա: Ախտանիշները կարող են շարունակվել վարակվելուց հետո կամ կարող են կրկնվել COVID-19-ից ապաքինվելուց հետո:

Հաղորդված ամենատարածված ախտանիշներն ու պայմանները ներառում են.

- Հոգնածություն
- շնչառության դժվարություն
- շարունակվող հազ
- կրծքավանդակի ցավ
- հոդերի ցավ
- ոչ բավարար եռանդ ֆիզիկական վարժությունների համար

- ջերմություն
- գլխացավեր
- հիշողության հետ կապված խնդիրներ և հստակ մտածելու դժվարություն («ուղեղի մառախուղ»)
- ընկճվածություն կամ անհանգստություն:

Երկարատև COVID-ի կանխարգելում

Երկարատև COVID-ը կանխելու լավագույն միջոցը ձեզ պաշտպանելն է COVID-19 վիրուսով վարակվելուց:

Պատվաստումը լավագույն միջոցն է՝ նվազեցնելու COVID-19-ի վտանգները:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ մարդիկ, ովքեր պատվաստված են COVID-19-ի դեմ, ավելի քիչ հավանական է, որ հաղորդեն երկարատև COVID-ի ախտանիշներ, քան այն մարդիկ, ովքեր պատվաստված չեն:

Հավելյալ տեղեկատվության համար

Եթե ձեր COVID-19-ի թեստը դրական է եղել ավելի քան մի քանի շաբաթ առաջ, և դուք դեռ վատառողջ եք, խոսեք ձեր բժշկի հետ:

Հավելյալ տեղեկատվության համար, այցելեք health.gov.au/covid19-vaccines-languages կայքը կամ զանգահարեք National Coronavirus Helpline 1800 020 080 հեռախոսահամարով: Ընտրեք տարբերակ 8 անվճար թարգմանչական ծառայությունների համար: